ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մ. Խ. ՔՈՐԹԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Երբ հասարակության տնտեսական կառավարման մեխանիզմը գիտականորեն հիմնավորված չէ, երբ տնտեսական գործունեության տարբեր ոլորտների և մարդկանց գործունեության գնահատման չափանիշները և ցուցանիշները չեն բխում հասարակական իրական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունից և սպառողի թելադրանքից, բացակայում է ուղղակի կապը արտադրողի և սպառողի միջև, դեֆիցիտը և հերթերը հասարակական կյանքի նորմա են դառնում, ապա հասարակության մեջ ձևավորվում է այսպես կոչված* ստվերային էկոնոմիկա: *Այլ խոսքով, երկրի տնտեսական և սոցիալական ոլորտի ոչ գիտական կառավարումը առաջ է բերում պետականորեն սահմանված կարգից և կանոններից շեղում, ձևավորում է ստվերային էկոնոմիկա։*

Սովետական տնտեսագետների, սոցիոլոգների հետազոտության կարևոր բնագավառ է նաև ստվերային էկոնոմիկայի սոցիալ-տնտեսական պատճառների հետազոտությունը *և դրանց վերացման գիտականորեն հիմնավորված հանձնարարականների մշակումը։*

Ստվերային էկոնոմիկան ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում պետականորեն թույլատրվող հասարակական, տնտեսական գործունեությունից դուրս ձեռնարկվող միջոցառումների մի ամբողջություն է, որն անօրինական ճանապարհներով ապահովում է որոշակի եկամտի ստացում։

Ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտներում այն ունենում է դրսևորման տարբեր ձևեր։ Նյութական արտադրության բնագավառում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն և այլն) ստվերային էկոնոմիկան դրսևորվում է չգրանցված նյութական բարիքների թողարկման և իրացման, հավելագրումների, թողարկվող արտադրանքի պետական ստանդարտի խախտման միջոցով գոյացած միջոցների իրացման և այլ ճանապարհով եկամուտների ստացման ու յուրացման ճանապարհով։ Ոչ նյութական արտադրության՝ առևտրի, կոմունալ-կենցաղային ծառայությունների, բժշկության, կրթության և այլ բնագավառներում այն դրսևորվում է տարբեր բնույթի ծառայությունների դիմաց հավելավճարների ստացման և յուրացման ձևով։

Ստվերային էկոնոմիկան մի կողմից հասարակական արտադրության և սպասարկման (ծառայությունների) ոլորտների անբավարար զարգացման ու ոչ կատարյալ կազմակերպման համակարգի, մյուս կողմից՝ հասարակական պահանջմունքների թերբավարարման արդյունք է։ Այլ խոսքով, ստվերային էկոնոմիկան ունի իր սոցիալ-տնտեսական հիմքերը, որոնց առկայության պայմաններում ծնունդ են առնում ընդհատակում գործող միլիոններ յուրացնող «մագնատներ» և կոպեկներ «փախցնողներ», հավելագրումներ ձևակերպող «վարպետներ» և այդ ճանապարհով հասարակությունից միլիոնավոր ռուբլիների հասնող միջոցներ յուրացնողներ, սև շուկայի գործակալներ և մատակարարման ոլորտի «արքաներ», հարյուր հազարավոր «հրորդներ» (толкачи) *և առևտրական գործարքների միջնորդներ (մակլերներ), բնակարաններ, քաղաքացիների գույքի և ավտոմեքենաների վերանորոգողների բանակ, բուժսպասարկման և կրթության բնագավառներում ծառայությունների*

* *Հոդվածի սկիզբը տե՛ս ամսագրի նախորդ համարում (1988, № 12)։*

դիմաց ներքին կարգով օրինականացված եկամուտներ ստացողներ և այլն։ Նշված այս և այլ անօրինական ճանապարհներով եկամուտներն իրենց հերթին վերաբաշխման են ենթարկվում կառավարման աստիճանակարգի տարբեր աստիճաններում. կամ պետական-իրավապահական մարմիններում բուն դրած անազնիվ մարդկանց միջև՝ «ծառայությունների» և հովանավորման դիմաց, որը հասարակության կողմից ընդունված է անվանել կաշառք։

Ստվերային էկոնոմիկան տնտեսության մեջ լճացման միտումների դրսևորման հետ միասին, ավելի մեծ շրջանակներ ընդունեց և գնալով ավելի մեծ թվով մարդիկ ընդգրկեց։ Դա տրամաբանական է, քանի որ բարձրորակ և մոդայիկ ապրանքների, բնակարանների վերանորոգման ու կահավորման, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման նկատմամբ հասարակության աճող գնողունակ պահանջները համապատասխան բավարարում չէին ստանում։ Դեֆիցիտի պայմաններում հերթերում ժամանակի և նյարդերի մեծ ու անիմաստ կորստի փոխարեն մարդիկ ստիպված են։ դրանց ձեռքբերման համար հավելավճար կատարել կամ հարազատի առողջության համար բուժող բժշկին որոշակի փոխհատուցում անելու քայլին դիմել։

Հասարակության բավական ստվար մասը, անկախ իր կամքից ու ցանկությունից, առնչվել ու դեռևս կառնչվի ստվերային էկոնոմիկայի այդ դրսևորումների հետ, քանի դեռ չեն վերացվել դրանց սոցիալական և տնտեսական հիմքերը։

Առողջ հասարակությունը նման իրավիճակի հետ երկար ժամանակ հաշտվել չի կարող։

Մեր երկրում հասարակական և տնտեսական կյանքի վերակառուցումը, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա խորացման և հրապարակայնության բազայի վրա, անխուսափելիորեն կհանգեցնի ստվերային էկոնոմիկայի վերացման։ Հասարակական արտադրության, կառավարման ու կազմակերպման ձևերի փոփոխումը և ԱԱՀՄ պետական ձեռնարկության (միավորման) մասին օրենքի գործողության մեջ մտնելը հնարավորություն է տալիս վերացնել նյութական արտադրության բնագավառում ստվերային էկոնոմիկայի ծնող պատճառները։ Այսպես, ձեռնարկությունների (միավորումների) լրիվ տնտհաշվարկին և ինքնաֆինանսավորման անցումը ստիպում է դրանց արտադրական ծրագրերը հպատակեցնել սպառողների պահանջներին, արտադրել այն և այնպիսի տրակով, որը սպառվում է։ Ձեռնարկությունն ինքնուրույնություն է ձեռք բերում նաև մատակարարման ու իրացման պայմանագրեր կնքելու բնագավառում և այլն։

Լրիվ տնտհաշվարկի և ինքնաֆինանսավորման պայմաններում՝ կվերանա հավելագրումների ճանապարհով պետական միջոցների յուրացումը, քանի որ բոլոր ձեռնարկությունները կձգտեն իրենց ֆինանսական և տնտեսական դրության բարելավմանը և ոչ մի կոլեկտիվ թույլ չի տա իր շահերի ոտնահարում։

Սպառման ապրանքներ թողարկող արդյունաբերական ձեռնարկությունները կձգտեն բնակչության պահանջարկը բավարարող բարձրորակ և մոդայիկ արտադրանքի թողարկման, որը կհանգեցնի դրանց դեֆիցիտի վերացման։

Ստվերային էկոնոմիկայի վերացմանը մեծապես կնպաստի կոոպերատիվների և անհատական աշխատանքային գործունեության զարգացումը մեր երկրում։ Դրանց ինչպես արտադրական, այնպես էլ սպասարկման գործունեությունն անմիջականորեն կբխի բնակչության պահանջմունքներից։ Այլապես դրանք իրենց գոյությունը պահպանել չեն կարող, քանի որ եկամտի այլ աղբյուր, բացի իրենց սեփական արտադրանքի և ծառայության իրացման դիմաց վճարներից չունեն։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, ակնհայտ է սպառողի թելադրանքը արտադրողի նկատմամբ, շուկայական, հարաբերությունների հետագա խորացում, որը նույնպես կհանգեցնի արտադրության հպատակեցմանը սպառմանը և դեֆիցիտի վերացմանը։

Գյուղատնտեսության մեջ բրիգադային և ընտանեկան կապալի լայն արմատավորումը, ինչպես նաև վարձակալական հարաբերությունների զարգացումը որոշակի պայմաններ կստեղծեն գյուղատնտեսական մթերքների հավելազրման և հասարակական հարստության յուրացման պրակտիկայի վերացման համար, որը լայն տարածում է գտել երկրի մի շարք շրջաններում։

Ծառայությունների և սպասարկման ոլորտում կատարվող արմատական վերակառուցումները նույնպես կնպաստեն այդ բնագավառներում ստվերային էկոնոմիկայի վերացմանը։ Երբ ծառայությունների և սպասարկման ոլորտում պետական ֆինանսավորումը կփոխարինվի բնակչության և տնտեսավարկային. կազմակերպությունների վճարման համակարգով, կվերանան բացասական երևույթների դրսևորման տնտեսական հիմքերը նաև այս բնագավառներում։

Մեր երկրում հասարակական, տնտեսական կյանքի վերակառուցման ընթացքում սոցիալիստական դեմոկրատիայի խորացման և հրապարակայնության բազայի վրա անխուսափելիորեն կմշակվեն ու կիրականացվեն արմատական նշանակության միջոցառումներ, որոնք կհանգեցնեն ավելի արմատական սոցիալական և տնտեսական վերափոխումների, որտեղ կբացառվեն ստվերային էկոնոմիկայի դրսևորումները։ Տրամաբանական է, որ այդպիսի արմատական միջոցառումները կպահանջեն գիտական խոր հետազոտություններ և գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ։

Երկրի այսօրվա ամենահրատապ պրոբլեմներից մեկը գիտատեխնիկական առաջադիմության անարգել ապահովման, գիտություն-տեխնիկա-արտադրություն ցիկլի համալիր տնտեսական մեխանիզմի մշակումն է։ Կյանքը ցույց է տալիս, որ համաշխարհային զարգացման այս բնագավառում մեր երկրի գրաված դիրքը չի համապատասխանում իր տնօրինած հզոր գիտական և տեխնիկական պոտենցիալին։ Դա բացատրվում է նրանով, որ հասարակական արտադրության և գիտության զարգացման տեխնիկայի մշակման ու գործնական կիրառման բնագավառներում իշխում է կառավարման կարգադրական սիստեմը։ Այդ ցիկլի բոլոր օղակներում բացակայում է ներքին նպատակային մղման այնպիսի մեխանիզմ, որը ստեղծեր առաջընթացն ապահովող փոխկապակցված մի համալիր տնտեսական սիստեմ։ Այստեղ խոսքը գիտական ստեղծագործության, տեխնիկական մշակման և գործնական կիրառման բնագավառներում գործող բոլոր սուբյեկտների այնպիսի շահագրգիռ սիստեմ ստեղծելու մասին է, որոնց համար ստեղծագործությունն ու նախաձեռնությունը կենսական նշանակություն կունենան։ Այսինքն, գործող հիմնական կոլեկտիվների գոյությունը և հետագա բարգավաճումը կախման մեջ կդրվի նոր ստեղծագործությունից, նոր տեխնիկական մշակումից ու կիրառումից։ Դրա համար կառավարման հրամայական համակարգի վերացման հետ միասին պետք է մշակվեն գիտության, տեխնիկական մշակումների, արտադրության կառավարման, կազմակերպման, ինքնուրույնության, սեփական ֆինանսական ռեսուրսների կազմավորման, շուկայական փոխհարաբերության մշակման, վարձատրության ու նյութական խթանման և այլ համալիր սիստեմներ, որտեղ յուրաքանչյուր օղակի գոյատևումը հիմնված կլինի սեփական ստեղծագործության և նախաձեռնության վրա։ Ըստ որում, այդ սեփական ստեղծագործությունը և նախաձեռնությունն, իր հերթին պետք է ելնի հասարակական պահանջմունքի թելադրող դերից, նրա բավարարումից։

Մի բան պարզ է, որ այսօր և՛ գիտության, և՛ տեխնիկական մշակումների, և՛ արտադրության կառավարման, կազմակերպման ու խթանման համակարգը հեռու է նման խնդիր լուծելուց ու այդ նպատակին չի ծառայում։ Այս խնդիրների լուծման բնագավառում սովետական տնտեսագետներն ինչպես տեսական, այնպես էլ գործնական, կազմակերպական բնույթի հետազոտությունների մեծ ասպարեզներ ունեն։

Երկրի առաջնահերթ և անհետաձգելի պրոբլեմը, որը համամիութենական

19-րդ կուսակցական կոնֆերանսի քննարկման առարկա դարձավ, պարենային պրոբլեմի լուծումն է:

Պարենային պրոբլեմի լուծումը պահանջում է առաջին հերթին գյուղատնտեսության կազմակերպման և կառավարման գործող համակարգի վերակառուցում: Այդ ուղղությամբ որոշակի քայլեր արդեն կատարվել են: Գյուղատնտեսության մեջ լայնորեն արմատավորվում է բրիգադային և անհատական կապալը, ընդունվեց «Կոոպերացիայի մասին» օրենքը, որն օրենսդրական ճանապարհով նպաստում է պարենային պրոբլեմի լուծման հետ առնչվող տարբեր կոոպերացիաների ստեղծմանը և այլն: Բայց պետք է նկատել, որ պարենային պրոբլեմի վերջնական լուծումը, մեր կարծիքով, գյուղատնտեսության կազմակերպման և կառավարման ավելի խորը, արմատական վերակառուցում է պահանջում, քանի որ բրիգադային, ընտանեկան, անհատական կապալն իր կազմակերպման, պլանավորման, վարձատրության համակարգով դեռևս չի ազատվում կառավարման հրամայական համակարգից: Գյուղատնտեսական մթերքների այս կամ այն տեսակի արտադրությունը որոշում է ոչ թե վարձակալը, այլ կոլտնտեսությունը, սովխոզը, ելնելով պետական մթերումների գծով ստացած առաջադրանքներից:

Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման համակարգի լուրջ թերությունների հետևանքով դեռևս շատ ցածր է նրա արդյունավետությունը: Գյուղատնտեսության բնագավառում կատարված կապիտալ ներդրումների տարեցտարի աճող և ահռելի չափերի հասնող ծավալները, ինչպես նաև նրա տեխնիկական հագեցման մակարդակն անհրաժեշտ փոխհատուցում չեն ապահովում:

Ներկա պայմաններում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման, պարենի նկատմամբ երկրի պահանջները բավարարելու և ընդհանրապես պարենային պրոբլեմը երկրի մասշտաբով լուծելու, ինչպես նաև պարենի մեծ պաշարներ ստեղծելու, համաշխարհային պարենային ֆոնդի ձևավորման բնագավառում մեր երկրին համապատասխան արժանի տեղ գրավելու համար անհրաժեշտ է արմատապես վերակառուցել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման, պլանավորման և կառավարման համակարգը: Հիրավի, գյուղատնտեսության վարման, նրա կազմակերպման ու կառավարման անցած 70-ամյա փորձի ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն համոզման, որ պարենային պրոբլեմը արմատապես և վերջնական լուծելու համար պետք է դիմել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման նոր համակարգի: Այն, մեր կարծիքով, պետք է ունենա կազմակերպման և կառավարման հետևյալ սկզբունքները. 1. Վարձակալական հիմունքներով (5, 10, 15, 20, 50 տարի ժամկետով) հողերի տրամադրումը տնտեսությունների, կազմակերպությունների, կոլեկտիվների, բրիգադների, ընտանիքների և անհատների օգտագործմանը: 2. Վարձաչափի մեծությունը հեկտարի հաշվով պետության կողմից սահմանվում է դրամով, ելնելով հողերի բնական բերրիությունից, շուկայի նկատմամբ տեղադրությունից, պետության, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության կողմից կատարված կապիտալ ներդրումներին ընկնող շահույթի չափից, շինությունների, կառույցների ամորտիզացիոն հատկացումների գումարի մեծությունից և այլն: 3. Հողերի օգտագործման, գյուղատնտեսական կուլտուրաների մշակման, անասնապահական մթերքների արտադրության չափերի վերաբերյալ վարձակալողներին պլանային առաջադրանքներ չեն տրվում: Յուրաքանչյուր վարձակալ ելնելով վարձակալվող հողակտորի բնական, կլիմայական, տնտեսական և այլ պայմաններից, ինքն է որոշում իր տնտեսությունը վարելու ուղղությունը: 4. Պետությունը համապետական նպատակներով օգտագործվող գյուղատնտեսական հումքի և պարենային մթերքների ֆոնդը (համապետական պարենային ֆոնդ) գոյացնում է պետական պատվերների միջոցով: Պլանավորվող տարում (հնգամյակում) պետական պատվերների նախնական չափերը որոշելուց հետո պետությունն իր ներկայացուցիչների (պետական մթերող կամ այլ կազմակերպությունների) միջոցով արտադրողների հետ պայմանագրեր է կնքում պետությանը վաճառվող

գյուղատնտեսական արդյունքների վաճառքի չափերի, գների և այլ պայմանների վերաբերյալ։

Համապետական պարենային ֆոնդի և պետությանն անհրաժեշտ գյուղատնտեսական այլ արդյունքների պետական պատվերների գնման գները պետք է հաստատվեն երկրի մասշտաբով որպես միասնական գներ, առանց տարբեր գոտիների, շրջանների դիֆերենցման, որը հնարավորություն կտա երկրի տարբեր շրջանները մասնագիտացնել գյուղատնտեսական արդյունքների արտադրության առավել արդյունավետ ուղղություններում։ Այլ խոսքով, պետք է դիֆերենցել ոչ թե գները, այլ վարձավճարը։

Պետական միասնական գների առկայության պայմաններում այս կամ այն գյուղատնտեսական արդյունքի վերաբերյալ պետական պատվերների պայմանագրեր կկնքեն միայն այն վարձակալները (տնտեսությունները, կազմակերպությունները, բրիգադները, անհատները), որոնց արտադրության պայմանները կհամապատասխանեն այդպիսի գներով արտադրանքի արտադրությանը։ Այնպես որ տարբեր ռեգիոնների, շրջանների, տնտեսությունների համար շահավետ կլինի գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների կամ մթերքների արտադրության իրականացումը։ Վարձակալները (տնտեսությունները) կարտադրեն այն, ինչը շահավետ է (միասնական գների գործողության պայմաններում) տվյալ բնակլիմայական և արտադրական պայմաններում։ Դա նշանակում է, որ վարձակալները կարտադրեն միայն շահաբեր արդյունքներ, հետևապես կվերանան վնասաբեր արտադրությունները և վնասաբեր տնտեսությունները, պետությունը կազատվի տասնյակ միլիարդավոր ռուբլիներ պետական պարտքեր (վարկեր) մարելուց (զիջելուց), գյուղատնտեսությանը տարեկան 75 մլրդ ռուբլի դոտացիա վճարելուց և այլն։ Որպեսզի վարձակալները շահագրգռված լինեն պետական պատվերների կատարման մեջ, սահմանված գները պետք է շահավետ լինեն նաև նրանց համար։ Այլ խոսքով, արտադրողները տնտեսապես պետք է ավելի մեծ շահագրգռվածություն հանդես բերեն պետական պատվերներ ունենալու և դրանց կատարման գործում։ 5. Գյուղատնտեսության արդյունքների նկատմամբ տնտեսությունների, կազմակերպությունների, քաղաքացիների պահանջների բավարարումը պետք է կատարվի ուղղակի տնտեսական կապերի (պայմանագրերի) ինչպես նաև առքի-ու վաճառքի միջոցով։ Գները կարգավորվում են փոխադարձ համաձայնության (պայմանագրային գների) հիման վրա։ 6. Անհրաժեշտ է պահպանել միայն պետական և կոոպերատիվ այն գյուղական տնտեսությունները, որոնք ունեն շատ բարձր արդյունավետություն ու շահութաբերություն և այդ ցուցանիշներով օրինակելի տնտեսություն են։ Այդ տնտեսությունները հավասարաբար պետք է ունենան պետական պատվերների պարտադիր առաջադրանքներ, նյութական ռեսուրսների և մատակարարման ուրույն սիստեմ՝ ինչպես պետական տնտհաշվարկային ձեռնարկությունները (միավորումները)։ 7. Գյուղատնտեսական տեխնիկայի, պահեստամասերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների և գյուղատնտեսությանը պիտանի այլ միջոցների մատակարարման ամբողջ համակարգն անհրաժեշտ է իրականացնել մեծածախ առևտրի սկզբունքով։ Հանրապետությունում, երկրամասերում, մարզերում և շրջաններում պետք է ստեղծել լրիվ տնտհաշվարկի ու ինքնաֆինանսավորման սկզբունքով գործող գյուղատնտեսությանը պիտանի բոլոր նյութատեխնիկական միջոցների իրացման մեծածախ բազաներ՝ իրենց վարձակալական, կոոպերատիվ, ինչպես նաև այլ սկզբունքներով գործող մասնագիտացված կամ հանրախանութների լայն ցանցով։

8. Անհրաժեշտ է ստեղծել լրիվ տնտհաշվարկի և ինքնաֆինանսավորման սկզբունքով գործող ագրոզոոտեխնիկական ծառայությունների համակարգ, որը տեխնիկայի սպասարկման, վերանորոգման, ագրոքիմիական, սելեկցիոն, տոհմաբուծական, տնտեսագիտական, կազմակերպական և այլ բնույթի վճարովի ծառայություններ կկատարի գյուղատնտեսական արտադրություն իրականացնող տնտեսությունների համար։ Այս ծառայությունների ամբողջ համակարգը կիրականացվի պայմանագրային սկզբունքով, որտեղ հատուկ պետք

է նշվեն ծառայության տեսակները և վճարման չափերը, որակական ու քանակական ցուցանիշների բարելավման մակարդակը և այլ պայմաններ։ Պայմանագրային պարտավորություններից բխող պայմանների թերակատարման, ինչպես նաև պայմանագրով նախատեսված արդյունքները ձեռք չբերելու հետևանքով առաջացած վնասների լրիվ փոխհատուցումը պարտադիր պետք է լինի կողմերի համար։

9. Գյուղական բնակավայրերի բնակչության արդյունավետ զբաղվածությունն ապահովելու համար անհրաժեշտ է մեծապես նպաստել արդյունաբերական արտադրական, շինարարական, ինչպես նաև կուլտուր-կենցաղային ու կոմունալ ծառայությունների բրիգադների ստեղծմանը, որոնք լայն գործունեություն կարող են ծավալել գյուղի, շրջանի, մարզի, երկրամասի, հանրապետության, Միության մասշտաբով աշխատանքային, տեղական բնական ռեսուրսները շարժման մեջ դնելով հասարակականորեն անհրաժեշտ խնդիրներ լուծելու ուղղությամբ։ Առաջարկվող սկզբունքներով գյուղատնտեսական արտադրության վերակառուցումը արմատական բեկում կմտցնի գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման և երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում։

Գյուղատնտեսական արտադրության արմատական վերակառուցումը, իհարկե, միայն առաջարկվող սկզբունքներով չի սահմանափակվում, կլինեն այլ առաջարկություններ և մոտեցումներ, որոնց համար լուրջ գիտական հետազոտություններ են պահանջվում։

Տնտեսագիտության տեսության և պրակտիկայի վերակառուցման տեսակետից անհրաժեշտ է նորովի մոտենալ նաև մեր հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման արդի պրոբլեմների վերլուծությանը։ Հանրապետությունը, որպես ՍՍՀՄ ժողովրդատնտեսական ամբողջական կոմպլեքսի մի բաղկացուցիչ մաս, երկրի տնտեսական և սոցիալական զարգացման պրոբլեմների լուծման ընդհանուր օրինաչափություններից բացի, ունի իր ռեգիոնալ զարգացման առանձնահատկությունները, որոնց ուսումնասիրությունը և ճիշտ գնահատումը հնարավորություն կտան մի կողմից ավելի ճկուն և արդյունավետ դարձնելու հանրապետական կոմպլեքսի ձևավորումը, որոշակի դարձնելու նրա տեղը համամիութենական աշխատանքի բաժանման մեջ, մյուս կողմից բարձրացնելու հանրապետության ներդրումը միութենական պրոբլեմների լուծման բնագավառում։

Ինչպես մեր հանրապետության, այնպես էլ Միության ցանկացած ռեգիոնի տնտեսական և սոցիալական զարգացումն անխուսափելիորեն պետք է հենվի աշխարհագրական միջավայրի, հանքահումքային և աշխատանքային ռեսուրսների, սոցիալական միջավայրի, ազգային, էթնիկական առանձնահատկությունների և ավանդույթների, բնակչության ընդհանուր կրթական ու կուլտուրական մակարդակի, գիտատեխնիկական պոտենցիալի և այլ գործոնների վրա։

Վերը նշված ցանկացած գործոնի անտեսումը, այս կամ այն ռեգիոնի, հատկապես առանձին ազգային կամ էթնիկական խումբ ներկայացնող ռեգիոնի տնտեսական և սոցիալական խնդիրները լուծելիս, մեծապես կնվազեցնի ինչպես ռեգիոնալ կոմպլեքսի, այնպես էլ դրա հետ փոխկապակցված միութենական կոմպլեքսի արդյունավետությունը։

Հարկ է նշել, որ մեր երկրում համամիութենական կոմպլեքսի, առանձնապես ռեգիոնալ կոմպլեքսի ձևավորման և արդյունավետության վրա խիստ բացասական ազդեցություն է թողել աշխարհագրական միջավայրի անտեսումը։ Իսկ այդ գործոնի անտեսումն արդյունք էր տասնյակ տարիներ տեսության մեջ արտադրողական ուժերի զարգացման գործում աշխարհագրական գործոնի դերի ժխտման, որն այսօր սոցիալ-տնտեսական և, առավել ևս էկոլոգիական լուրջ պրոբլեմներ է ստեղծել ամբողջ երկրի և, հատկապես, առանձին ռեգիոնների, այդ թվում մեր հանրապետության համար։

Բնակլիմայական պայմանները և աշխարհագրական միջավայրը թելադրում են ինչպես արտադրության պայմանների առանձնահատկություններ,

ասենք, շինարարական ինդուստրիայի համապատասխան ձևավորում, արտադրական շինարարություն և կառուցումներ, արտադրության առանձնահատուկ պայմաններ և կառուցվածք, համապատասխան տեխնոլոգիական մշակումներ, տրանսպորտային միջոցներ և այլն, այնպես էլ սոցիալական ոլորտի ձևավորում՝ բնակարանային շինարարություն, կոմունալ հարմարություններ և սպասարկում, ճանապարհաշինություն, առողջապահական համալիրներ, քաղաքների ու բնակավայրերի բարեկարգում և բազմաթիվ այլ պայմաններ, որոնք կապված են ժամանակակից մարդու աշխատանքի և ապրելու նորմալ պայմաններ ստեղծելու հետ։ Միաժամանակ պետք է նկատել, որ բնակլիմայական գործոնի հետևանքով ռեգիոնների արտադրական և սոցիալական կոմպլեքսի ստեղծման հասարակական ծախսերի կառուցվածքը փոխվում է։ Բացի այդ, փոխվում են նաև աշխատուժի վերարտադրության և պահպանման ծախսերը։ Այդ պատճառով անհրաժեշտ է դառնում աշխատավարձի ռեգիոնալ տարբերություն հասկացությունը՝ կապված աշխարհագրական միջավայրի հետ։

Մեր հանրապետության յուրահատուկ բնակլիմայական, ռելիեֆային պայմանները կամ աշխարհագրական միջավայրը թելադրում են առանձնահատուկ մոտեցում ունենալ ոչ միայն հանրապետական տնտեսական և սոցիալական կոմպլեքսի ձևավորման, այլ նաև ներհանրապետական ռեգիոնների (տնտեսական շրջանների) տնտեսական ու սոցիալական զարգացման նկատմամբ։

Ինչպես հայտնի է, Հայկական ՍՍՀ-ը ունի ընդգծված լեռնային տարածք, որի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1830 մ (ամենացածր կետը 375 մ է, իսկ ամենաբարձրը՝ 4090 մ)։ Տարածքի 9,9 %-ը տեղադրված է մինչև 1000 մ բարձրության վրա, 18,3 %-ը՝ 1000—1500 մ, 31,3 %-ը՝ 1500—2000 մ, 24,5 %-ը՝ 2000—2500 մ բարձրության վրա, իսկ 2500 մետրից բարձր տարածքը կազմում է 16 %։ Ինչպես տեսնում ենք, հանրապետության տարածքի ավելի քան 40 %-ը (2000 մ և բարձր տարածքը) պիտանի չէ նորմալ կյանքի ապահովման, իսկ 16 %-ը՝ անգամ գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար։ Հանրապետության տարածքի ավելի քան 70 %-ը և բնակավայրերի 52 %-ը գտնվում են ծովի մակերևույթից 1500 մ և ավելի բարձրության վրա։ Ըստ որում, հանրապետության վարչական 9 շրջանների (Ամասիա, Ապարան, Արագած, Արթիկ, Վարդենիս, Ղուկասյան, Կամո, Մարտունի, Սևան) բոլոր բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից ավելի քան 1500 մ բարձրության վրա, իսկ որոշ շրջաններում նման բարձրության վրա են գտնվում բնակավայրերի գերակշռող մասը (Ազիզբեկովի շրջանի 22 բնակավայրերից 19-ը, Ախուրյանի շրջանի 34 բնակավայրերից 25-ը, Եղեգնաձորի շրջանի 32 բնակավայրերից 23-ը, Կալինինոյի շրջանի 24 բնակավայրերից 21-ը, Կրասնոսելսկի շրջանի 18 բնակավայրերից 15-ը, Սիսիանի շրջանի 36 բնակավայրերից 33-ը, Հրազդանի շրջանի 18 բնակավայրերից 15-ը և այլն)։

Լեռնային տարածքում բնակավայրերի նման տեղաբաշխում բացառիկ է Սովետական Միության համար։

Հանրապետության գերակշռող լեռնային տարածքի, դրա մեծ թեքությունների պատճառով գյուղատնտեսական օգտագործելի հողերի տեսակարար կշիռը Միության մեջ գրավում է վերջին տեղը։ Բավական է ասել, որ ՀՍՍՀ-ում մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական օգտագործելի հողերը 0,4 հեկտարից,, իսկ վարելահողերը՝ 0,14 հեկտարից պակաս է, այն դեպքում, երբ ՍՍՀՄ միջինը կազմում է համապատասխանաբար՝ 2,1 և 0,87 հեկտար (ՌՍՖՍՀ-ինը՝ 1,6 և 0,97 հեկտար, Ուկրաինական ՍՍՀ-ինը՝ 0,8 և 0,69, Մոլդավական ՍՍՀ-ինը՝ 0,7 և 0,4 հեկտար)։

Հանրապետության բնակլիմայական մյուս կարևոր առանձնահատկությունը չրազուրկ գոտի լինելն է։ Նրա տարածքում հոսող քաղցրահամ ջուր ունեցող գետերը, ինչպես նաև տեղումները խիստ սակավ են։ Բավական է նշել, որ հանրապետությունում մեկ շնչին տարեկան ընկնում է 2,4 հազ. խմ

ջուր, իսկ ՍՍՀՄ միջինը կազմում է 18 հազ. խմ ջուր։ Մեկ քմ տարածության ընկնող ջրի քանակով հանրապետությունը ՍՍՀՄ-ում գրավում է 13-րդ տեղը։

Պետք է նկատել, որ հանրապետության խիստ չոր կլիմայի պատճառով նրա գյուղատնտեսական օգտագործելի հողատարածության բացարձակ դերակատող մասում առանց ջրառատացման անհնար է բուսաբուծական, անգամ կերային կուլտուրաների մշակումը։ Դրա հետևանքով էլ հանրապետությունն անտառազուրկ գոտի է, իսկ եղած անտառներն արդյունաբերական նշանակություն չունեն։

Եվ վերջապես, ընդհանուր առմամբ հանրապետության ընդերքը հարուստ չէ ժամանակակից արդյունաբերության զարգացման հանքահումքային և էներգետիկ ռեսուրսներով, որն իր հերթին թելադրում է յուրահատուկ, հիմնավորված մոտեցում ունենալ արդյունաբերության զարգացման նկատմամբ։

Տրամաբանական է, որ տարածքի կազմության և բարձրության տարբերությունները հանրապետությունում և նրա առանձին շրջաններում չեն կարող իրենց դրոշմը չդնել դրանց զարգացման ուղղությունների վրա։ Բացի այդ, աշխատանքի և ապրելու նորմալ պայմաններ ստեղծելու համար բնակլիմայական վերը նշված առանձնահատկությունները հասարակական աշխատանքի լրացուցիչ ծախսեր են պահանջում, որոնք յուրահատուկ չեն մյուս ռեգիոններին։

Չնայած իր լեռնային տարածքին, հանրապետությունը Միության ամենախիտ բնակեցված շրջաններից է։ Բնակչության միջին խտությամբ այն առայժմ զիջում է միայն Մոլդավական ՍՍՀ-ին և մոտ 9 անգամ գերազանցում է ՍՍՀՄ միջին խտությունը։ Իսկ եթե բացառենք մեր հանրապետության տարածքի այն մասը, որը գտնվում է ծովի մակերևույթից 2500 ու ավելի մետր բարձրության վրա և բնակության համար պիտանի չէ, ապա բնակչության խտությունը 1987 թ. տվյալներով մեզ մոտ կազմել է 135,4 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա, իսկ Մոլդավական ՍՍՀ-ում՝ 124,2 մարդ։

Բնակչության միջին բարձր խտության պայմաններում ռելիեֆի, բնակլիմայական պայմանների և արտադրողական ուժերի ոչ համաչափ տեղաբաշխման հետևանքով անհամեմատ մեծ են բնակչության խտության տարբերությունները հանրապետության շրջաններում և գոտիներում (1 քառ. կմ-ի վրա տատանվում է 17-ից մինչև 300 և ավելի մարդ)։

Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը լուծելիս պետք է հաշվի առնել ևս մեկ առանձնահատկություն։ Դա նրա բնակչության խիստ կենտրոնացումն է քաղաքներում, հատկապես խոշոր քաղաքներում (1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից առաջ եղած տվյալներով Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում կենտրոնացված էր հանրապետության բնակչության ավելի քան 45, և արդյունաբերական արտադրական կարողությունների մոտ 70 %-ը)։

Հանրապետության մյուս առանձնահատկությունն այն է, որ նրա հզոր արդյունաբերական պոտենցիալը հիմնականում բազավորվում է ոչ սեփական հումքային ռեսուրսների վրա, հետևապես և ցածր է սեփական հումքային ռեսուրսների վրա բազավորված արդյունաբերության ինչպես տեսակարար կշիռը, այնպես էլ սեփական հումքային ռեսուրսներից վերջնական պատրաստի արդյունքների ստացման և հարակից արտադրությունների զարգացման աստիճանը։

Տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հանրապետության հզոր գիտատեխնիկական պոտենցիալը, նրա օգտագործման ուղղությունները։

Եվ վերջապես, հանրապետության կոմպլեքսային զարգացման խնդիրները լուծելու համար ուշադրության կենտրոնում պետք է պահել նրա սոցիալական ոլորտի թույլ բազան։

Հանրապետության վերը նշված բնակլիմայական, դեմոգրաֆիական, տնտեսական և սոցիալական իրավիճակի լուրջ, բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա գիտականորեն հիմնավորված հանձնարա-

բականներ մշակելու նրա հեռանկարային զարգացման ուղղությունների վերաբերյալ։

Այդ առանձնահատկություններից ելնելով՝ տնտեսագետների առաջնահերթ խնդիրն է ուսումնասիրել և գիտականորեն հիմնավորել մեր հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման գլխավոր ուղղությունները։ Դա նշանակում է գտնել հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության և գիտության, ինչպես նաև գիտատեխնիկական մշակումների այն գլխավոր ուղղությունները, որոնք տնտեսական, էկոլոգիական, սոցիալական զարգացման տեսակետից շահեկան և հեռանկարային կարող են լինել հանրապետության համար։ Այլ խոսքով, մշակել հանրապետության տնտեսական և սոցիալական գիտականորեն հիմնավորված կոնցեպցիա, իր նպատակային-ծրագրային խնդիրներով և լուծման հիմնավորված ուղիներով։

Բացի հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման կոնցեպցիան մշակելուց, հանրապետության տնտեսագետների կարևոր խնդիրն է նաև նրա ռեգիոնների, շրջանների համալիր զարգացման ուղղությունների հետազոտությունը և այդ ուղղությամբ հիմնավոր հանձնարարականների մշակումը։ Նման խնդրի անհրաժեշտությունը թելադրվում է հանրապետության ոչ միայն տնտեսական, այլև վարչական շրջանների, անգամ դրանց բնակավայրերի խիստ առանձնահատուկ բնակլիմայական պայմաններով։

Մեզ մոտ առանձնահատուկ նշանակություն ունի լեռնային շրջանների տնտեսական ու սոցիալական զարգացման պրոբլեմների հետազոտումը և այդ ուղղությամբ գիտական հանձնարարականների մշակումը։ Անդրկովկասի երեք հանրապետությունների ակադեմիաների նախագահությունների որոշմամբ այդ աշխատանքների կոորդինացումը դրված է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի վրա։ Պրոբլեմի մշակման ուղղությամբ կազմվել է հետազոտության ծրագիր և Անդրկովկասի մյուս հանրապետությունների գիտությունների ակադեմիաների տնտեսագիտության ինստիտուտների հետ կատարվում են կոորդինացիոն աշխատանքների առաջին քայլերը։

Լեռնային շրջանների տնտեսական և սոցիալական զարգացման պրոբլեմի խորը, հիմնավոր գիտական հետազոտությունների կատարումը մեզ մոտ առանձնապես կարևոր է նրանով, որ հանրապետության տարածքի, ինչպես նաև բնակավայրերի գերակշռող մասը, ինչպես տեսանք, գտնվում են լեռնային գոտում։ Հետևապես, լեռնային շրջանների տնտեսական և սոցիալական կոմպլեքսային զարգացման հիմնավոր, գիտական ծրագրի մշակումը և իրականացումը լուծում է ոչ միայն տնտեսական և սոցիալական խնդիր, այլ նաև հանրապետության տարածքի քիչ թե շատ համաչափ բնակեցման խնդիրը։ Ինչպես հայտնի է, Արարատյան տնտեսական շրջանն արդեն համարվում է գերխիտ բնակության շրջան։ Հետևապես, հանրապետության բնակչության աճի բացարձակ գերակշռող մասը, եթե ոչ ամբողջը, պետք է բնակություն հաստատի հանրապետության լեռնային և նախալեռնային շրջաններում։ Դա պահանջում է լեռնային և նախալեռնային շրջանների զարգացման այնպիսի ծրագրի մշակում, որտեղ լուծվեն բնակեցման հետ կապված մարդկանց աշխատատեղի, բնակարանի, հաղորդակցության միջոցների, սոցիալական ոլորտի, կոմունալ-կենցաղային և այլ ծառայությունների կոմպլեքս պրոբլեմները։ Այլ խոսքով, լեռնային և նախալեռնային շրջաններում պետք է ստեղծվեն ոչ միայն մեր օրերի, այլ նաև 21-րդ դարի մարդու աշխատելու և ապրելու բոլոր պայմանները։ Ստեղծված իրավիճակում դա հարցի լուծման միակ ճիշտ ուղին է։ Բայց պետք է նկատել, որ նման ծրագրի մշակումը տնտեսագիտական, սոցիոլոգիական, հոգեբանական, կենսաբանական և այլ բնույթի բազմակողմանի հետազոտություն և հիմնավորում է պահանջում։

Հանրապետության տնտեսագետների գիտական հետազոտությունների մյուս կարևոր պրոբլեմը ժողովրդագրական իրադրության և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ զբաղվածության ուղղությունների հետազոտումն

ու գիտականորեն հիմնավորված հանձնարարականների մշակումն է։ Այդ հարցերի ուսումնասիրությունը երկրի հասարակական-տնտեսական կյանքի վերակառուցման տեսակետից նոր մոտեցումներ է պահանջում։

Հանրապետության ամբողջ գիտական մտքի, այդ թվում տնտեսագետների անհետաձգելի խնդիրը հանրապետության բնական և արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և էկոլոգիական իրավիճակի բարելավման կամ շրջակա միջավայրի պահպանման պրոբլեմի մշակումն է։ Այս պրոբլեմը, ինչպես հայտնի է, երկրագնդի համարյա բոլոր ժողովուրդներին հուզող պրոբլեմ է, բայց մեր հանրապետության համար այսօր դարձել է առաջին անհրաժեշտություն, կենսական հարց։

Երկրի հասարակական-տնտեսական կյանքի վերակառուցման տեսակետից մեզ համար կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև հանրապետության տնտեսական-վարկի ուսումնասիրությունը։ Ռեգիոնների բնակլիմայական, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական առանձնահատկությունների հաշվառումն առավել անհրաժեշտ է դառնում տարածքային զարգացման խնդիրների համալիր լուծման, դրանց արդյունավետ օգտագործման գիտական ուղիների որոնման համար։ Այդ խնդիրների լուծմանը առանձնապես մեծ զարկ և գործնական բնույթ կարող է տալ ռեգիոնալ տնտեսական վարկի ներդրումը։ Այն մարդկանց, կոլեկտիվներին կմղի մտածել և գտնել տարածքի առանձնահատկությունների հետ կապված և դրանից բխող բոլոր պրոբլեմների արդյունավետ լուծման ուղիներ։ Եթե մենք կարողանանք գտնել երկրի տարբեր ռեգիոնների առանձնահատկություններից բխող բոլոր պրոբլեմների տնտեսական, սոցիալական և էկոլոգիական արդյունավետ լուծման ուղիները, ապա, տրամաբանական է, լուծած կլինենք ինչպես առանձին ռեգիոնների զարգացման ուղղությունների, այնպես էլ ամբողջությամբ վերցրած երկրի զարգացման ուղղությունների պրոբլեմը։ Դա հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման, երկրի տնտեսական հզորության ամրապնդման հիմնական ուղին է։ Մի բան պարզ է, որ երկիրը և պետությունը հզոր են, երբ դրանց մասերը (ռեգիոնները) տնտեսապես ամուր և հզոր են։

Հանրապետական (ռեգիոնալ) տնտեսական հաշվարկը հնարավորություն է տալիս մոբիլիզացնել իր տրամադրության տակ եղած բոլոր ռեսուրսները՝ ինչ ներքին՝ ազգային, էթնիկական ակտիվության բոլոր աղբյուրներից, մի բան, որը բացառվում է կառավարման վարչական-գիտատեսչական սիստեմի պայմաններում։

Վարչական-գերատեսչական կառավարման սիստեմի պայմաններում ամբողջ երկիրը, նրա յուրաքանչյուր ռեգիոնը տարրալուծվում է միութենական մինիստրությունների և գերատեսչությունների ներգործության ոլորտի միջև, որտեղ յուրաքանչյուրը գործում է իր նեղ գերատեսչական շահերի տեսակետից, ոչ մի միութենական կազմակերպություն չի մտահոգվում (և դա հնարավոր էլ չէ) տարածքի (ռեգիոնի) կոմպլեքսային, ամբողջական զարգացման մասին։ Միութենական դիդանտները լուծում են առաջին հերթին նեղ ճյուղային խնդիրներ։ Այս պայմաններում չի բացառվում, որ նույն տարածքում միութենական տարբեր կազմակերպությունների շահերը, առավել ևս դրանց ու տեղական իշխանությունների շահերը, միմյանց հակադրվեն։ Տարածքի ռեսուրսների օգտագործման ֆինանսական (և ոչ միայն ֆինանսական) միջոցները կենտրոնացված են միութենական տարբեր կազմակերպությունների ձեռքում և տնօրինվում են նրանց կողմից, որ բացառում է ռեգիոնի ռեսուրսների կոմպլեքսային, արդյունավետ օգտագործման հնարավորությունը։ Ահա թե ինչու ռեգիոնալ կամ տարածքային կառավարման համակարգին առավելություն տալը դարձել է երկրի գիտատեխնիկական, տնտեսական ու սոցիալական զարգացման արդի անհետաձգելի կարևոր ուղեն։ Սովետական էկոնոմիկայի կառավարման որոշակի փորձը՝ առավելապես ճյուղայինը, կամ առավելապես տարածքայինը հուշում է, որ վիթխարի տարածք և արտադրական, գիտատեխնիկական պոտենցիալ ունեցող երկիրն այսօր գերաղանցա-

պես ճյուղային, կենտրոնացված համակարգով կառավարելը բացարձակապես արդյունավետ չէ։ Այդ է ապացուցում ՍՍՀՄ-ում տնտեսության կառավարման ճյուղային համակարգին անցման հետռեֆորմյան փորձը։ 1965 թ. տնտեսական ռեֆորմը, ճյուղային կառավարման համակարգի վերականգնումը ենթադրում էին ճյուղային մինիստրությունների միջոցով ապահովել գիտատեխնիկական մեծ առաջընթաց։ Բայց, ավելի քան 20 տարվա փորձը ցույց տվեց հակառակը։ Գերատեսչական կառուցվածքը հանդիսացավ գիտատեխնիկական առաջընթացի արգելակ, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արգելակող մեխանիզմի կարևոր տարր։

Այս բոլորից հետևում է, որ տարածքի կոմպլեքսային զարգացման ամբողջ պատասխանատվությունը պետք է դրվի տեղական ղեկավարության վրա (հանրապետություն, երկրամաս, մարզ)։ Դա ենթադրում է հանրապետության մարմինների տնօրինությանը հանձնել համարյա ամբողջ տնտեսական պոտենցիալը (բացառյալ ռազմաստրատեգիական օբյեկտները)։ Միության բյուջեի նկատմամբ հանրապետությունը հանդես կգա որպես մեկ ամբողջություն, իր ազգային եկամտի որոշ մասը, ՍՍՀՄ Գերագույն սովետի հաստատած կայուն նորմատիվով, ամեն տարի մուծելով միութենական ֆոնդ։ Համապետական կարիքների համար պարենային, արդյունաբերական արդյունքների, գիտատեխնիկական մշակումների ներդրումները կարող են կատարվել պետական պատվերների համակարգով՝ նախօրոք կնքված պայմանագրերի հիման վրա, լրիվ արժեքի փոխհատուցման սկզբունքով։

Միութենական բյուջեին սահմանված նորմատիվով վճարումները կատարելուց, եկամուտների ու ծախսերի համադրումից գոյացած միջոցների տնօրինությունը ամբողջովին անցնում է հանրապետության Գերագույն սովետին։

Հանրապետության տնտհաշվարկը կպահանջի նրա ժողովրդական տնտեսության կառուցվածքի լուրջ կատարելագործում։ Հանրապետությունում կսահմանափակվեն սեփական տնտեսական բազա և զարգացման հեռանկար չունեցող ճյուղերը, որոնք աշխատում են հիմնականում Միության հեռավոր շրջաններից բերվող հումքի վրա և արդյունքը գերակշռող մասով արտահանում են Միության մյուս շրջանները, առաջնահերթ կզարգանան արդյունաբերության այն ճյուղերը, որոնց հումքային ռեսուրսներն առկա են տվյալ ռեգիոնում։ Ըստ որում, դրանց զարգացումը կընթանա վերջնական արդյունքի թողարկման և հարակից արտադրությունների զարգացման ուղղությամբ։ Բացի այդ, ռեգիոնը հիմնականում կթողարկի այն արդյունքները, որոնց արտադրական և անձնական սպառման կարիքը մեծ է տեղում կամ ռեգիոնին առավել մոտ շրջաններում։ Դա հնարավորություն կտա տնտեսել փոխադրման հսկայական միջոցներ, որոնք էական նշանակություն կունենան ռեգիոնի տնտհաշվարկային եկամուտների ապահովման գործում։ Երբ յուրաքանչյուր ռեգիոն նպատակամղվի նյութական արտադրության այդպիսի հաշվենկատ, խնայողական կազմակերպմանը, արդյունավետ կոմպլեքսային համակարգի ստեղծմանը, ամբողջ երկրի մասշտաբով կտնտեսվեն հսկայական նյութական, ֆինանսական, մարդկային ռեսուրսներ, կբարձրանա հասարակական արտադրության արդյունավետությունը։ Կվերանան ոչ ռացիոնալ և հեռավոր փոխադրումների օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները։ Ռեգիոնները, ելնելով հասարակական իրական պահանջի և իրենց սեփական ռեսուրսների հնարավորությունից ու դրանց արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունից, ճիշտ կորոշեն իրենց նյութական արտադրության զարգացման ուղղությունները, արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի կառուցվածքը։ Կառավարման վարչական-գերատեսչական համակարգը բացառում է նման հնարավորությունները, որովհետև դրա մոտեցման չափանիշները, ինչպես նշվեց, նեղ գերատեսչական են։

Ռեգիոնալ էկոնոմիկայի զարգացման համար պետք է հաշվի առնել ևս մեկ հանգամանք։ Եթե ռեգիոնի համար նյութական ռեսուրսները սահմանափակ են, ապա հոգևորը՝ գործնականում անսահմանափակ է։ Տարածքային տնտհաշվարկը պահանջում է շարժման մեջ դնել և զարգացնել առկա մտա-

վոր, մշակութային, կրթական, հմտությունների, գործարարության ամբողջ պոտենցիալը։ Այդ պոտենցիալի զարգացումն ու օգտագործումը ռեգիոնի տնտեսական պայմաններում կարող է ունենալ գործնական երկու դրսևորում։ Նախ, ռեգիոնի զարգացումն ուղղակիորեն շոշափում է նրա ամբողջ բնակչության շահերը և այդ տեսակետից նրանց ակտիվության աստիճանը բարձրանում է։ Մարդիկ աշխատում են դրսևորել իրենց կարողությունները, իհարկե նաև շահագրգիռ տեսակետից։ Օգտվելով դրանից, ռեգիոնը, որն առավել հստակ է պատկերացնում հոգևոր զարգացման հետ առնչվող իր պրոբլեմները, նրանց առաջադրում է լուծման խնդիրները, կապված ինչպես նյութական արտադրության, ծառայությունների և մյուս ոլորտների զարգացման, այնպես էլ գիտատեխնիկական մշակումների, կրթության, մշակույթի, գիտության զարգացման հետ։ Տրամաբանական է, այստեղ խնդիրները կլինեն կոնկրետ, նպատակային, լուծումները կունենան իրենց հասցեատերերը։ Հետևապես, դա գիտատեխնիկական, կուլտուր-տեխնիկական նոր մակարդակի կբարձրացնի ռեգիոնի էկոնոմիկան, որը իբրև կողմնորոշիչ կունենա ոչ թե միջին միութենականը, այլ համաշխարհային բարձր մակարդակը։

Երկրորդը, ռեգիոնի հոգևոր պոտենցիալը (գիտական, տեխնիկական, կուլտուրական, կրթական և այլն) կարող է գործադրվել երկրի այլ շրջանների կամ աշխարհի այլ երկրների համար զանազան խնդիրների լուծման նպատակով, որոնք պատենտների, լիցենզիաների, հեղինակային իրավունքի և այլ ճանապարհով համալրում են ռեգիոնի ֆինանսական, վալյուտային միջոցները։ Այլ խոսքով, երկրի հոգևոր պոտենցիալը կառավարման վարչական-գերատեսչական համակարգի պայմաններում պասսիվ դերից վեր է ածվում ակտիվ հասարակական-տնտեսական ֆունկցիա իրականացնող գործոնի։

Եվ վերջապես, ռեգիոնի սոցիալական ոլորտի պրոբլեմների հետևողական և ամբողջական լուծումը, համամասնական զարգացումը անհնար է պատկերացնել առանց տարածքային կառավարման համակարգի, կառավարման տարածքային մարմինների ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսների լիիրավ տնօրինման իրավունքի։ Վերջին հաշվով, պետք է նկատել, սոցիալական ոլորտը տարածքային ֆունկցիա է իրականացնում, այսինքն առնչվում է տվյալ ռեգիոնի սոցիալական պահանջմունքների բավարարման հետ։ Հետևապես, կենտրոնական տարբեր գերատեսչական մարմինները համապատասխան ռեգիոնի պահանջներն ամբողջական և կոմպլեքսային լուծել չեն կարող։

Պետք է նկատել, որ ռեգիոնի տնտեսությունը ենթադրում է նրանում գտնվող բոլոր օղակների տնտեսական կազմակերպման համակարգ, որի ակտիվության, գործարարության ու նախաձեռնության աստիճանով է պայմանավորված ամբողջ ռեգիոնի տնտեսական համակարգի հաջողությունը։

Տրամաբանական է, որ պետք է մշակվի նաև ներհանրապետական կազմակերպությունների՝ տվյալ դեպքում շրջանների, տնտեսական կազմակերպման համակարգ։ Այստեղ հստակ պետք է սահմանափակվեն նաև շրջանի և նրա տարածքում գործող արտադրական, տնտեսական կազմակերպությունների, տարբեր շրջանների, ինչպես նաև շրջանի ու հանրապետության տնտեսական փոխհարաբերությունների համակարգը։ Այդ համակարգում, հավանաբար, մեր հանրապետությունում առանձնահատուկ մոտեցումներ կլինեն այն շրջանների նկատմամբ, որոնց արտադրողական ուժերը թույլ են զարգացած, բնակեցման որոշակի պրոբլեմներ ունեն և այլն։ Դրանք բոլորը ներռեգիոնալ պրոբլեմներ են, որոնց կարգավորումը հանրապետությունների իրավասության խնդիրներ են։

Ռեգիոնալ առանձնահատկությունների առկայության դեպքում տնտեսական հարաբերությունների սիստեմը տրամաբանորեն տարբերություններ առաջ կբերի նաև եկամուտների ձևավորման բնագավառում։ Որոշ ռեգիոններ (հանրապետություններ) անխուսափելիորեն կօգտվեն իրենց բարենպաստ բնակլիմայական պայմաններից, հանքահումքային հարուստ ընդերքից, էներ-

գետիկ և այլ ռեսուրսներից, ինչպես նաև արդեն ձևավորված, բարձր զարգացած նյութական ու հոգևոր արտադրության ու ծառայությունների ոլորտներից։ Դրանց, ինչպես նաև որոշ ռեգիոններում գործերի լավ կազմակերպվածության, նախաձեռնության, գործարարության և այլ գործունեության հետևանքով անխուսափելի կդառնան եկամուտների մակարդակների տարբերությունների առաջացումը, հետևապես և մարդկանց վաստակների տարբերությունը։ Դա պետք է դիտել օրինաչափ պրոցես, որը ռեգիոնին կմղի իր նյութական ռեսուրսների և հոգևոր պոտենցիալի առավել ռացիոնալ օգտագործման, գործարարության ու նախաձեռնության դրսևորման, նոր հասարակական մեծ պահանջարկ վայելող գիտատեխնիկական մշակումների ու դրանց թողարկման, համաշխարհային շուկա դուրս գալու և այլ ճանապարհներով հասնելու ռեգիոնի բարձր կենսամակարդակի ապահովմանը։

Այլ խոսքով, ինչպես վերը նշված, այնպես էլ բոլոր այն գործոնները, որոնք մարդկանց մեջ ներքին մղում կարող են առաջ բերել իրենց գործունեության բարելավման բնագավառում, մրցակցություն ռեգիոնների, տարածքային կառավարման համակարգերի միջև, հասարակական առաջընթացի աղդակ են և պետք է խրախուսվեն։ Ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, ներքին մղման ուժերով, համընդհանուր առաջընթացի ապահովման այլ ճանապարհ տրված չէ։

Մենք պետք է գործնականում վերջնականապես հրաժարվենք հավասարարական բաշխման կեղծ տեսությունից՝ ինչպես անհատների, այնպես էլ կոլեկտիվների վաստակների և անգամ ամբողջ ռեգիոնի մասշտաբով։ Հավասարարականության վրա բարձրացող կեղծ սոցիալական արդարությունը այսօր վեր է ածվել երկրի հասարակական-տնտեսական առաջընթացի լուրջ արգելակի։

Սովետական Միության տնտեսական և սոցիալական զարգացման տնտեսագիտական հիմնավորման թեմատիկան, իհարկե, վերը թվարկածով չի սահմանափակվում։ Դրանք հիմնական, առաջնահերթ հետազոտության ուղղություններն են, որոնք ուղղակի առնչվում են երկրի հասարակական-տնտեսական կյանքի վերակառուցման հետ։

ПЕРЕСТРОЙКА И ЗАДАЧИ ЭКОНОМИСТОВ

М. Х. КОТАНЯН
Академик АН АрмССР

Резюме

Для разработки экономической концепции перестройки необходима перестройка самой экономической науки. Реальная перестройка экономической науки возможна лишь при пересмотре всей системы существующих теоретических экономических концепций, ибо существующая до сих пор система не отвечает целям и задачам перестройки.

Следует найти и научно обосновать ту систему общественных отношений, которая позволит в условиях всевозрастающих и изменяющихся человеческих потребностей обеспечить самый высокий жизненный уровень. Социализм должен иметь такую модель. Именно эта модель социализма понятна и приемлема для людей. Все остальные модели, которые не решают этой задачи или не служат ее решению, не могут быть научными, и естественно, от них необходимо отказаться. Эта модель социализма требует основательного пересмотра общественных, экономических оценок и господствующих в общественных науках теоретических концепций.